մանր իրերի, կերակուրի համար, շատ սակավ դեպքերում, ավելի ընդարձակները՝ ցերեկը անկողինները դարսելու համար։ Սովորաբար վերջին նպատակին ծառայում են պատերի տակ հատակից բարձրացրած հողի տախտէրը, որոնց վրա երբեմն անկողինները փռվում են խսիրի կամ գորգի վրա։ Քարանձավի մեջն է զետեղված և՛ ցորենի ու ալյուրի ամբարն, և՛ ամբողջ տնային գույքը, երբեմն նույնիսկ երկրագործական գործիքները, որովհետև այդ բնակարանները մեծ մասամբ բակ չեն ունենում։ Լույսը ներս է թափանցում դռան գլխին բաց թողած փոքր լուսամուտի միջով։ Հազվագյուտ են այնպիսի քրատակնէրը, որոնք պատերի մեջ բաց արած ունեն հատուկ անցքեր՝ լույսը ներս թողնելու համար։ Այն քարանձավներում, որոնք փորված են բուրգերի մեջ կամ ձորակողի այնպիսի մասերում, որտեղ բարձրադիր ժայռերի վրա կանգ է առնում անձրևաջուրը կամ ձյունը, անձրևից հետո և ձնհալքի ժամանակ առաստաղի վրայից սկսում է ջուրը կաթկթել, և առանց այն էլ շատ զգալի ներսի խոնավությունը սաստկանում է։ Այդ մութ և խոնավ բնակարանում հյուծվում էին և՛ հասակավորները, և՛ մանուկները։ Ոսկրացավը դառել էր համատարած երևույթ։

Քրատակնէրը փորված են լինում երբեմն այնպիսի բարձր տեղերում, որ անհնարին է լինում այնտեղ հասնել լեռան կողին կտրտված աստիճաններով։ Մինչև այսօր էլ այսպիսի դեպքերում վեր ելնելու համար դիմում են պարանի օժանդակության։ Դրա համար քարայրի մուտքի շեմքին շեղ ամրացված է լինում գերան, հատակից մի փոքր բարձր։ Բարձրացողը պարանի ծայրին կապում է քար կամ երկաթի կտոր և այդ ծայրը ձգում է վեր, այնպես, որ դիպչի գերանին և վրան փաթաթվի, ապա լավ ստուգում է, թե պարանը որքա՞ն ամուր է փաթաթվել, և սկսում է վեր ելնել՝ բռնելով պարանից և ոտքերը հենելով լեռնակողին՝ ժամանակի ընթացքում գոյացած ոտնատեղերին։ Հաճախ նա ելնում՝ իջնում է մի ծանր բեռ (քրօց, կապօց), երբեմն էլ երեխա շալակած. Վերելքի այդ ձևն ապշեցրել էր 1735 թ. Աբրահամ Կրետացի կաթողիկոսին, երբ նա Թահմազ-Ղուլի-Նադր-խանին շահ հայտարարելուց և սուրն օրհնելուց հետո Մուղանի դաշտից գնում էր Տաթև, այնտեղից Մեղրու վրայով՝ Էջմիածին վերադառնալու համար։ Իր ճամփորդության նկարագրության մեջ նա գրում է՝

> «Եկի 'ի գիւղն Խնձորեկ (Խնձորեսկ), որ է 'ի մեջ քարաժեռ լերանց մեծամեծաց... և իջանք 'ի մէջ ձորոյն և տեսանք հիանալի բան... 'ի բարձրաբերձ տեղիս՝ յայս կողմն և յայն կողմն ձորոյն՝ դէմ յանդիման միմեանց փորեալ յապառաժ վէմս՝ քարայր՝ որք են մաղարայք, իւրաքանչիւր ոք վասն իւր տան բնակութեան շինեալ բնակէին. և այն իսկ էին զարմանք՝ որ կաշէ փոկով ելանէին և իջանէին. կանայք՝ զտղայս ստնդիացս կապեալ ողին իւրեանց, նույնպէս և զսափոր ջրոց և այլոց հարկաւոր իրաց, և նույնպէս փոկով ելանէին 'ի վեր, և մտանէին 'ի բարձրագոյն որջս վիմաց, և քաշէին զփոկէ առաստանն 'ի վեր, որ այլ մարդ ոչ կարէր մտանել»[10]։

Քարայրներն ընդարձակելու համար հնում դիմում էին դալանքերի օգնության։ Դա քրատակի առջև տաշած քարով կառուցված թաղակապ պատշգամբ է, որն երբեմն հենված է լինում հենց լեռնակողի ժայռի վրա, կամ հատկապես

[10] Աբրահամ կաթողիկոս Կրետացւոյ, Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-շահին պարսից, Վաղարշապատ, 1870, գլ. Խէ, էջ 74։